ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔ

# ՀԱԿՈԲ ՂԱԶԱՆՉՅԱՆ. «ԵՍ ՇԱՏ ԹԵԼԵՐՈՎ ԵՄ ԿԱՊՎԱԾ ԹԲԻԼԻՍԻԻՆ»



*Ինչպես արդեն տեղեկացրել ենք մեր ընթերցողներին («Վրաստան», 24 մայիսի), Երեւանի Պատանի հանդիսատեսի պետական թատրոնի ղեկավարը՝ Հայաստանի թատերական գործիչների միության նախագահի Հակոբ Ղազանչյանը, Թբիլիսիի Գրիբոյեդովի անվան պետական ակադեմիական ռուսական դրամատիկական թատրոնի եւ երեւանցի դերասանների մասնակցությամբ, Գրիբոյեդովի անվան թատրոնում բեմադրեց Շեքսպիրի «Լիր արքա» պիեսը: Տարբեր երկրների թատերախմբերի հետ համագործակցված աշխատանքում՝ ղազանչյանական ներկայացումները բնորոշվում են համապարփակ, խորքային մոտեցումներով, հաճախ՝ վերաիմաստավորված գաղափարական լուծումներով: Այդ յուրօրինակ մոտեցման շնորհիվ, Թբիլիսյան հանդիսատեսի կողմից եւս մեծ հետաքրքրությամբ ընդունվեց Շեքսպիրյան հանրահայտ «Լիր արքա» ողբերգությունը:*

*Ներկայացումից հետո մենք զրուցեցինք ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Հակոբ Ղազանչյանի հետ:*

***- Պարոն Ղազանչյան, կկարողանա՞ք ասել, թե որերորդ անգամ եք լինում Թբիլիսիում:***

- Չէ', հաշիվը կորցրել եմ: Շատ հաճախ եմ լինում եւ, իրոք, հաշիվը կորցրել եմ... Դե, ներկայացումով, երեւի՝ վեց-յոթ անգամ, բեմադրությամբ՝ երկրորդ անգամ: Առաջին բեմադրությունը Ռուսթավելու թատրոնում արեցի, գրիբոյեդովցիների հետ բեմադրությունը երկրորդն է: Թատերական, հատկապես՝ շեքսպիրյան, փառատոներին մասնակցությամբ՝ մի վեց-յոթ անգամ: Ոչ աշխատանքային, հենց այնպես՝ շա՜տ-շատ անգամ: Մի խոսքով, «շատ թելերով ես կապված եմ Թբիլիսիին»:

***- Եվ դա զուտ ստեղծագործակա՞ն կապ է...***

- Ոչ, դա ուսանողական տարիներից է գալիս ու առնչվում ուսանողական ընկերուհուս հետ. նա թբիլիսցի էր...

***- Գանք թատրոնին: Ըստ Ձեզ, ինչո՞վ է այսօր պահանջված Շեքսպիրի «Լիր արքան»:***

- Ես կարծում եմ՝ այն մեկնաբանությունը, որով մենք փորձեցինք հանդես գալ, շատ արդիական է: Այսօր մեր աչքի առաջ փլուզվում են երկրներ, տեղի են ունենում հեղափոխություններ, սկսում են գերիշխել անարխիան, անիշխանությունը, եւ, իմ կարծիքով այսօրվա տեսանկյունից, եթե փոքր-ինչ ուշադիր դիտարկենք Լիրի արարքը, ով պետությունը տոնական տորթի պես բաժանեց մասերի ու նվիրեց իր աղջիկներին, դարձյալ հանգում ենք այն եզրակացության, որ չի կարելի այդպես թեթեւսոլիկ վարվել պետության հետ, որ իշխանության հետ, ընդհանրապես, նման կատակներ չեն անում... Եվ ե'ս այն բեմադրիչներից չեմ, որ հակված եմ արդարացնելու Լիրին, աստվածացնելու նրան, ու, կարծում եմ, արդյունքում՝ Լիր արքան ստացավ ա'յն, ինչին նա արժանի էր...

***- 90-ականների հանդիսատեսթատրոն կապի խզման ճգնաժամային օրերից հետո, այսօր Թբիլիսիում Ռուսթավելու, Մարջանիշվիլու ու էլի մի 2-3 թատրոնների տոմս ճարելը, պատկերացրեք՝ պրոբլեմ է, ինչպե՞ս է այդ խնդիրը Հայաստանում:***

- Հայաստանում տենդենցը դրական է, հանդիսատեսը սկսում է կապվել թատրոնի հետ, եւ կարծում եմ, որ զարգացումը առավել քան խոստումնալից է:

***- Դուք համատեղ ներկայացումներ եք բեմադրել Ռոբերտ Ստուրուայի հետ, բեմադրեցիք նաեւ գրիբոյեդովցիների հետ, նման ներկայացում ձեռնարկվո՞ւմ է, արդյոք, ադամյանցիների հետ, եւ հույս ունենա՞նք, որ այդ ներկայացումը կկարողանանք դիտել մեր Թբիլիսիի հայկական թատրոնում:***

- Ես հենց այս օրերին Թբիլիսիի հայկական թատրոնում աշխատում ենք Կարինե Խոդիկյանի (արձակագիր, դրամատուրգ, «Դրամատուրգիա» գրական հանդեսի խմբագիր, ով, ի դեպ, ծնվել եւ մեծացել է Ախալքալաքիում), «Սիրային քառանկյունի» պիեսի բեմադրության վրա: Դե, իհարկե, այսօր այդ բեմին չի կարելի խաղալ, քանի որ շենքը վթարային է ու ձեր երկրի համապատասխան երկրաբանա-սեյսմիկ ծառայությունների կողմից արգելք է դրված: Բայց, հույս ունեմ՝ մոտ ապագայում այդ պրոբլեմը լուծում կստանա: Ըստ էության, լուծումն արդեն ընթացքում է, որովհետեւ Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի վերջին այցը (մայիսի 20-21) լուրջ խթան էր այդ ուղղությամբ: Ընդ որում, թատրոնի հարցը բանակցության սեղանին դրված կարեւորագուն հարցերից մեկն էր: Որոշ տեղային շինարարական միջամտությունների, խոսքս ոչ կապիտալ վերանորոգման, այլ ճաքերի, պատերը ամրացնելու եւ նման վերափոխումների մասին է, կարծում եմ՝ շենքը կշնչի ու կշարունակի իր աշխատանքը: Դա, ըստ ամենայնի, մեկ տարվա ընթացքում պետք է, որ լուծվի:

***- Բեմարվեստի ճանաչված եւ սիրված անունների՝ ռեժիսոր Երվանդ Ղազանչյանի ու դերասանուհի Գալյա Նովենցի որդին՝ Հակոբ Ղազանչանը, շատերի կարծիքով, իր բեմադրման ոճով նման չէ հորը, համամի՞տ եք ասվածին:***

- Կարծում եմ՝ այս դեպքում, ընդհանրապես, սխալ էլ կլինի, եթե զավակը նմանվի հորը: Երբ մտնում ես մշակույթի ասպարեզ, դու պետք է անհատականություն լինես, ուզես այդ, թե չուզես, լինես մեծ կամ ոչ մեծ անհատականություն: Դա միեւնույն է: Եվ, իբրեւ անհատականություն, մշակույթ, առավել եւս, ռեժիսուրայի բնագավառ պետք է մտնես քո սեփական տեսանկյունով: Այստեղ, ի դեպ, խնդրին պետք է նայել ոչ թե այն իմաստով, թե ես՝ ռեժիսորս, իմ առաջադրած տվյալ տեսանկյունով հատուկ նպատակ եմ դրել հակառակվել: Ո'չ, ուղղակի ես այդպես եմ մտածում, ես այդպե'ս եմ տեսնում թատրոնը, ու ինքը՝ Երվանդ Ղազանչյանը, ողջունում է նման մոտեցումը:

***- Դե', ինչ, մնում է Ձեզ մաղթել ամենայն բարին, շնորհակալություն՝ հետաքրքիր զրույցի համար:***

*ԶՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*



# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15

# ადგილობრივი თვითმმართველობის არჩევნები

## 2014 წლის 15 ივნისი

**ამომრჩეველთა საყურადღებოდ!** **Ի ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ**

კენჭისყრა იმართება 08.00 საათიდან 20.00 საათამდე

Քվեարկությունն անց է կացվում ժամը 08.00-ից մինչև ժամը 20.00-ը:



კენჭისყრის შენობაში შესვლისას ნაკადის მომწესრიგებელ კომისიის წევრს წარუდგინეთ პირადობის მოწმობა (იძულებით გადაადგილებული პირის შემთხვევაში აგრეთვე დევნილის მოწმობა) ან პასპორტი და გაიარეთ მასთან მარკირების შემოწმების პროცედურა

Քվեարկության շենք մտնելիս՝ հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին ներկայացրե՛ք ինքնությունը հավաստող վկայական (հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարհանվածի դեպքում՝ նաև տարհանվածի վկայական) կամ ՛անձնագիր և նրա մոտ անցե՛ք նշմարման ընթացակարգ:

**თუ აღმოჩნდა, რომ გაქვთ მარკირება, არ მოგეცემათ კენჭისყრაში მონაწილეობის უფლება**
**ԵԹԵ ՊԱՐԶՎԻ, ՈՐ ԱՐԴԵՆ ՈՒՆԵՔ ՆՇՄԱՐՈՒՄ, ՁԵԶ ՉԻ ՏՐՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ**





მარკირების შემოწმების პროცედურის გავლის შემდეგ მიდით სარეგისტრაციო მაგიდასთან და რეგისტრატორს წარუდგინეთ პირადობის მოწმობა (იძულებით გადაადგილებული პირის შემთხვევაში აგრეთვე დევნილის მოწმობა) ან საქართველოს მოქალაქის პასპორტი

გაიკეთეთ მარკირება

Նշմարումը ստուգելու ընթացակարգն անցնելուց հետո, գնացե՛ք գրանցման սեղանի մոտ և գրանցումն իրականացնողին ներկայացրե՛ք ինքնությունը հավաստող վկայական (հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարհանվածի դեպքում՝ նաև տարհանվածի վկայական) կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր:

Անցե՛ք նշմարում:

**მარკირებაზე უარის თქმის შემთხვევაში არ მოგეცემათ კენჭისყრაში მონაწილეობის უფლება**
**ՆՇՄԱՐՈՒՄԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ՁԵԶ ՉԻ ՏՐՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ**





ამომრჩეველთა სიაში თქვენი გვარის გასწვრივ გააკეთეთ ხელმოწერა

მიიღეთ რეგისტრატორისგან ბეჭდითა და ხელმოწერით დამოწმებული საარჩევნო ბიულეტენები

Ընտրողների ցուցակում ձեր ազգանվան երկայնքով ստորագրե՛ք:

Գրանցումն իրականացնողից ստացե՛ք կնիքով և ստորագրությամբ վավերացված քվեաթերթիկներ:



კენჭისყრის კაბინაში შემოხაზეთ თქვენთვის სასურველი ერთი საარჩევნო სუბიექტის რიგითი ნომერი (ყოველ საარჩევნო ბიულეტენში)

თუ დამოუკიდებლად არ შეგიძლიათ შეავსოთ საარჩევნო ბიულეტენი, უფლება გაქვთ, კენჭისყრის კაბინაში დასახმარებლად მიიწვიოთ ნებისმიერი პირი, გარდა საარჩევნო კომისიის წევრისა, კანდიდატისა, საარჩევნო სუბიექტის წარმომადგენლისა, დამკვირვებლისა

Քվեախցիկում շրջագծե՛ք Ձեզ համար ցանկալի ընտրական սուբյեկտի հերթական համարը (յուրաքանչյուր քվեաթերթիկում):

Եթե չեք կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, իրավունք ունեք քվեախցիկ Ձեզ օգնելու հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, դիտորդի:

**თუ გაგიფუჭდათ საარჩევნო ბიულეტენი, მიმართეთ საარჩევნო კომისიის თავმჯდომარეს, გადაეცით გაფუჭებული და მოითხოვეთ ახალი საარჩევნო ბიულეტენი**

**ԵԹԵ ՎՆԱՍԵԼ ԵՔ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ, ԴԻՄԵ՛Ք ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ, ՓՈԽԱՆՑԵ՛Ք ՎՆԱՍՎԱԾԸ ԵՎ ՊԱՀԱՆՋԵ՛Ք ՆՈՐ ՔՎԵԱԹԵՐԹԻԿ**





კენჭისყრის კაბინიდან გამოსვლის შემდეგ აიღეთ სპეციალური კონვერტი და დაკეცილი საარჩევნო ბიულეტენები მოათავსეთ მასში

სპეციალური კონვერტი მოათავსეთ საარჩევნო ყუთში

Քվեախցիկից դուրս գալուց հետո, վերցրե՛ք հատուկ ծրարը և ծալված ընտրական քվեաթերթիկները զետեղե՛ք նրա մեջ:

Հատուկ ծրարը գցե՛ք քվեատուփի մեջ:

**კენჭისყრაში მონაწილეობის შემდეგ, გთხოვთ, დატოვოთ საარჩევნო უბანი**
**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՑ ՀԵՏՈ, ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԴՈՒՐՍ ԳՆԱԼ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻՑ**

ცესკო
საქართველოს საარჩევნო ადმინისტრაცია

**ცესკოს ცხელი ხაზი: 2510051**
**ԿԸՀ-Ի ԹԵԺ ԳԻԾԸ. 2510051**

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ



## ՀԱՅԱՍՏԱՆ-ՇՎԵՅՑԱՐԻԱ. ԸՆԴԳԾՎԵՑ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

*Հունիսի 4-ին պաշտոնական այցով Երեւան ժամանեց ԵԱՀԿ գործող նախագահ, Շվեյցարիայի նախագահ, արտաքին գործերի դաշնային դեպարտամենտի ղեկավար Դիդիե Բուրկհալտերը:*

Հայաստանի նախագահի նստավայրում դիմավորման եւ Սերժ Սարգսյանի հետ նեղ, ապա պաշտոնական պատվիրակությունների մասնակցությամբ, ընդլայնված կազմով բանակցություններից հետո Սերժ Սարգսյանը եւ Դիդիե Բուրկհալտերը անցկացրին համատեղ մամլո ասուլիս:

Նշվեց, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը Հայաստանի եւ Շվեյցարիայի նախագահների հանդիպման գլխավոր հարցերից մեկն էր: Այս հարցում երկու երկրների նախագահները համակարծիք են՝ ԼՂ հակամարտությունը պետք է կարգավորվի խաղաղ բանակցությունների եւ երկխոսության միջոցով նաեւ ընդգծվեց, որ ԵԱՀԿ ՄԽ համանախագահությունը հակամարտության կարգավորման ամենաօպտիմալ ձեւաչափն է:

Այցի շրջանակներում, ԵԱՀԿ գործող նախագահ, Շվեյցարիայի նախագահ Դիդիե Բուրկհալտերն այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ծաղկեպսակ դրեց Հայոց Մեծ եղեռնի զոհերի հուշարձանին: Շվեյցարիայի նախագահը նաեւ եղեւնի է տնկել հուշահամալիրի Հիշողության պուրակում:

## ՔՆՆԱՐԿՎԵԼ Է «ՎԵՐԻՆ ԼԱՐՍԻ» ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑՈՒՄԱԿԵՏԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՐՑԸ

*Հունիսի 5-ին Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի տրանսպորտի նախարար, ՀՀ եւ ՌԴ միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի ռուսական կողմի համանախագահ Մաքսիմ Սոկոլովի հետ:*

Զրույցի ընթացքում, մասնավորապես, քննարկվել է «Վերին Լարսի» սահմանային անցակետի որոշ հատվածների վերանորոգման հարցը:

Կարեւորելով Վերին Լարսի սահմանային անցակետի դերը հայ-ռուսական առեւտրաշրջանառության գործում՝ Հովիկ Աբրահամյանը նշել է, որ անհրաժեշտ է լուծում տալ բնակլիմայական պայմանների հետեւանքով հաճախակի առաջացող ձնակույտերի եւ սողանքների խնդրին, որոնք բացասաբար են ազդում բեռնափոխադրումների ծավալի վրա:

Զրուցակիցների պայմանավորվածության համաձայն, Մաքսիմ Սոկոլովի առաջարկով, ռուսական կողմը կստեղծի աշխատանքային խումբ: Խումբը մեկ ամսվա ընթացքում ուսումնասիրություն կիրականացնի «Վերին Լարսի» անցակետում, որից հետո էլ կիստակեցվեն հետագա անելիքները:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ




*Հունիսի 2-ին Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը մասնակցեց Հայաստանի արտաքին գործերի նախարարության կենտրոնական ապարատի եւ դիվանագիտական ներկայացուցչությունների ու հյուպատոսական հիմնարկների ղեկավարների հավաքին, որն անցկացվեց Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:*

Հանդիպմանը Հովիկ Աբրահամյանը ներկայացրել է Հայաստանի տնտեսության տարբեր բնագավառների զարգացմանն ուղղված կառավարության առաջիկա ծրագրերն ու նախատեսվող միջոցառումները, անդրադարձել արտաքին տնտեսական քաղաքականության ուղղությամբ մեր երկրի դիվանագետներից սպասվող ակնկալիքներին:

Հովիկ Աբրահամյանը հավաստիացրել է, որ կառավարությունը կձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները՝ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու եւ անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերելու հարցում:

Այնուհետեւ ծավալվել է մտքերի փոխանակություն վարչապետի հնչեցրած առաջնայնությունների շուրջ եւ ներկայացվել տարբեր առաջարկություններ:



## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԵԼ Է 14,8 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ԱՊՐԱՆՔ

*Մարդասիրական օգնության կարգով Հայաստան ներմուծված ապրանքների ծավալը տարվա առաջին եռամսյակում կազմել է 958,6 տոննա՝ 6,1 մլրդ դրամ կամ 14,8 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ցուցանիշն աճել է շուրջ 17,7 տոկոսով:*

Ստացված օգնության 43,5 տոկոսը կազմել են մանածագործական իրերը, 16,5 տոկոսը՝ քիմիայի եւ դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը, 11,2 տոկոսը՝ սարքերը եւ ապարատները, 10,8 տոկոսը՝ մեքենաները, սարքավորումները եւ մեխանիզմները, 3,5 տոկոսը՝ տարբեր արդյունաբերական ապրանքները, 3,2 տոկոսը՝ կոշկեղենը, գլխարկներն ու հովանոցները:

Մարդասիրական օգնության հիմնական մասը՝ 56,4 տոկոսը, բաժին է ընկել Եվրամիության երկրներին, ԱՊՀ երկրների մասնաբաժինը կազմել է 1,4 տոկոս: ԱՄՆ մասնաբաժինն ընդհանուր մարդասիրական օգնության կառուցվածքում կազմել է 24,2 տոկոս, Կորեայի Հանրապետությանը՝ 4,6 տոկոս, իսկ Հնդկաստանինը՝ 3,2 տոկոս:

## ՄԱՏՉԵԼԻ Է ԴԱՐՁԵԼ ՀԻՓՈԹԵՔՈՎ ԲՆԱԿԱՐԱՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼԸ

*«Ազգային հիփոթեքային ընկերություն»-ը հաշվարկել է Հայաստանում բնակարանային մատչելիության ինդեքսը: Այն ցույց է տալիս, թե քանի տարում ընտանիքը միջոցներ կկուտակի բնակարան ձեռք բերելու համար:*

Ազգային հիփոթեքային ընկերությունը հաշվարկների համար հիմք է ընդունել, որ միջին աշխատավարձով երկու աշխատող ունեցող ընտանիքում յուրաքանչյուրը ստանում է 158,873 հազարական միջին աշխատավարձ եւ ցանկանում է ձեռք բերել երկսենյականոց բնակարան Երեւանում՝ 70 քմ մակերեսով: 2014 թվականի առաջին եռամսյակում Երեւանում բնակարանի 1 քմ-ի միջին արժեքը եղել է 273 հազար 400 դրամ: Այսինքն՝ ցանկալի բնակարանը կարժենա 19 մլն 140 հազար դրամ, եւ միջին վիճակագրական ընտանիքն իր եկամուտներն ամբողջությամբ պետք է խնայի 5 տարի՝ Երեւանում միջին արժողության բնակարան ձեռք բերելու համար:

Եթե ընտանիքը չունի համապատասխան միջոցներ, կդիմի հիփոթեքային վարկավորման օգնությանը: Միջին եկամուտներ ունեցող ընտանիքը վարկավորման միջին պայմաններով (12,5 տոկոս տարեկան տոկոսադրույք, 13 տարի ժամկետ, 30 տոկոս կանխավճար) կարող է ստանալ մինչեւ 11 մլն դրամ հիփոթեքային վարկ:

## ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է



*Հայաստանում աշխատանք փնտրողների թիվը, 2014թ. ապրիլի 30-ի դրությամբ, կազմել է 64 հազար 350 մարդ եւ, նախորդ տարվա նույն օրվա համեմատ, նվազել 8,3 տոկոսով, այդ թվում՝ գործազուրկների թվաքանակը կազմել է 60 հազար 995 մարդ. աճը 1,3 տոկոս է:*

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, այս տարվա ապրիլի վերջին գրանցված աշխատանք փնտրողներից 46,2 հազարը կանայք են (նվազումը՝ 7,2 տոկոս), 18,2 հազարը՝ տղամարդիկ (նվազումը՝ 10,8 տոկոս), իսկ գործազուրկներից կին է 44,3 հազարը (աճը՝ 0,9 տոկոս), տղամարդ՝ 16,7 հազարը (աճը՝ 2,5 տոկոս): Աշխատանք փնտրողներից 16-24 տարեկան է 6,8 հազար մարդ, 25-30 տարեկան՝ 9,3 հազար մարդ, գործազուրկներից 16-24 տարեկան է 6,5 հազար մարդ, 25-30 տարեկան՝ 8,7 հազար մարդ:

Այս տարվա հունվար-ապրիլին աշխատանքով ապահովվել է 3 հազար 480 մարդ. 2013թ. նույն ժամանակահատվածի ցուցանիշը նվազել է 5,6 տոկոսով: Հայաստանում աշխատուժի պահանջարկը 2014թ. վերջի դրությամբ՝ կազմել է 1 հազար 551 մարդ՝ 27,9 տոկոսով պակաս, քան մեկ տարի առաջ, իսկ աշխատանք փնտրողների թվաքանակը մեկ թափուր աշխատատեղի հաշվով՝ 42 մարդ. աճը կազմել է 2,4 տոկոս:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ



***Հռոմի Կաթոլիկ եկեղեցու սրբազան քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս պապը հունիսի 5-ին Վատիկանում հանդիպել է Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսի հետ: Երկու առաջնորդները միասին աղոթել են Առաքելական պալատի Փրկության մայր փաճարում: Արամ Ա-ին ուղղված ուղերձում Հռոմի պապը վերհիշել է հայ ժողովրդի կրած փառապանքները՝ նշելով, որ դրանք պետք է ընկալվեն եւ մեծարվեն՝ որպես Քրիստոսի մարմնին հասցված վերքեր:***

***Պապը նաեւ հիշատակել է քրիստոնյա համայնքների դիմագրաված մարտահրավերները Միջին Արեւելքում եւ ողջունել նրանց միասնականությունն ու Միջին Արեւելքին կառչած մնալու հավատարմությունը:***

***Հռոմի Կաթոլիկ եկեղեցու Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս պապի եւ եղբայրական այցով Վատիկան մեկնած Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիպումը կայացել է մայիսի 8-ին, Առաքելական պալատում:***

### ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

***Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը հունիսի 5-ին հրավիրել է Անվտանգության խորհրդի նիստ, որի օրակարգում ընդգրկված են եղել 2014թ. հայսահափիկային մշակաբույսերի անվտանգ բերքահավաքը եւ հրդեհավտանգ ժամանակահատվածում առաջացող հրդեհների դեմ պայքարը արդյունավետ կազմակերպելու նպատակով իրականացվող միջոցառումներին եւ 2013 թվականի եւ 2014թ. առաջին եռամսյակի ԼՂՀ ժողովրդագրական ցուցանիշներին վերաբերող հարցեր:***

***Երկրի ղեկավարը համապատասխան հանձնարարականներ է տվել կառավարությանը եւ շահագրգիռ մարմիններին՝ քննարկված հարցերի պատշաճ իրականացման ուղղությամբ:***

### ԿԻԵՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԳԼԽԱՎՈՐԻ ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆԸ

***Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը կգլխավորի Հայաստանի պատվիրակությունը Ուկրաինայի նորընտիր նախագահ Պյոտր Պորոշենկոյի երդմնակալության արարողությանը:***

***Նշենք, որ Ուկրաինայի նորընտիր նախագահ Պյոտր Պորոշենկոյի երդմնակալության արարողությունը տեղի կունենա հունիսի 7-ին:***

### ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

***Այս տարվա հունվար-ապրիլին Հայաստանի բեռնափոխադրումների ծավալը կազմել է 2 մլն 860,1 հազար տոննա, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից փոքր է 12,2 տոկոսով:***

***Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, երկաթուղային բեռնափոխադրումների ծավալը 2014թ. նշված ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 10,4 տոկոսով: Ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվել է 1 մլն 355,9 հազար տոննա բեռ՝ կամ 19,8 տոկոսով պակաս, քան անցյալ տարվա առաջին չորս ամիսներին:***

***Արտահանման օդային բեռնափոխադրումները նվազել են 20 տոկոսով, իսկ մայրուղային խողովակաշարային տրանսպորտով փոխադրումների ծավալը կազմել է 687,3 հազար տոննա՝ 2013թ. հունվար-ապրիլի համեմատ աճելով 5,3 տոկոսով:***

CyanMagentaYellowBlack



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՀՈՒՆԻՍ

*8.06.2014. Հոգեգալուստ (Պենտեկոստե)*

Առաքյալների վրա Սուրբ Հոգու իջման հիշատակության Տոնն է, որ տեղի է ունեցել Սուրբ Հարության հիսուներորդ օրը: Այդ պատճառով էլ Հոգեգալուստը միշտ տոնում են Զատկից հիսուն օր հետո: Սուրբ Հոգին Սուրբ Երրորդության երեք անձերից մեկն է, համագո եւ հավասար Հորը եւ Որդուն: Քրիստոս Իր երկրային գործունեության ընթացքում առաքյալների հետ խոսել էր Սուրբ Հոգու գալստյան մասին:



Երկուշաբթիից սկսվում է Եղիական պահքը:

Հայ Առաքելական եկեղեցու կողմից սահմանված տարվա չորս եղանակի պահքերից սա ամառնամուտի շաբաթապահքն է: Ինչպես մյուս եղանակների պահքերը, Եղիական պահքը եւս եկեղեցական որեւէ տոնի պատրաստություն չէ: Ըստ ավանդության, Եղիական է կոչվում միայն այն պատճառով, որ նախորդում է շաբաթապահքի հաջորդ կիրակիին՝ Եղիա մարգարեի հիշատակության տոնին:

## ՏԱՐԵՐՔ

### ԴԱՐԻԱԼԻ ԿԻՐՃԻՑ ԷՎԱԿՈՒԱՑՆՈՒՄ ԵՆ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

*Հունիսի 6-ին Դարիալի կիրճում հայտարարվել է բանվորների եւ տեխնիկայի շտապ էվակուացիա: Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ենթակառույցների եւ տարածաշրջանային կառավարման նախարարությունը, ցուցիչները ստորգետնյա ցնցումներ են գրանցել Ղազբեգի լեռան վրա: Միացել է հատուկ ազդանշանային համակարգը, որը տեղեկացրել է ստորգետնյա ցնցումների մասին, ինչից հետո սկսվել է ճանապարհի վրա աշխատող բանվորների եւ տեխնիկայի էվակուացիան:*



Նշենք, որ Դարիալի կիրճում շարունակվում են մայիսի 17-ին տեղի ունեցած սողանքի հետեւանքների վերացման աշխատանքները: Ճանապարհի մաքրման աշխատանքներում ներգրավված էր 70 միավոր տեխնիկա:

Հիշեցնենք, որ Դարիալի կիրճում տեղի ունեցած սողանքի արդյունքում, փակվել է ճանապարհը: Անցկացված փրկարարական աշխատանքների շնորհիվ, դուրս է բերվել 15 մարդ: Ներկայումս անհայտ կորած են համարվում վեցը: Կորածների մեջ են նաեւ ազգությամբ հայեր՝ ՌԴ քաղաքացիներ Կարպ Պողոսովը (ծնվ. 1957թ.) եւ Գեորգի Գեւորգովը, որոնց մասին տեղեկություն դեռեւս չկա:

Ներկա դրությամբ, Գվելեթի-Դարիալ (Ներքին Լարս) ավտոճանապարհին մայիսի 17-ին տեղի ունեցած փլվածքի հետեւանքով դեռեւս շարունակում է փակ մնալ Ռուսաստան տանող ավտոճանապարհը:

## ՖՈՒՏԲՈԼ

### ՆՈՐ ՎԱՐԿԱՆԻՇ, ԽԱՂԻ ՆՈՐ ՈՐԱԿ

ՖԻՖԱ-ն հրապարակել է ազգային հավաքականների վարկանիշային նոր սանդղակը: Նոր աղյուսակում Վրաստանը առաջադիմել է 7 հորիզոնականով եւ հիմա հանգրվանել է 96-րդ տեղում: Հինգ հորիզոնականով նահանջել է Հայաստանի թիմը: Այն ներկայումս 38-րդն է: Առաջին տեղում անփոփոխ Իսպանիայի հավաքականն է: Երկրորդ տեղում գերմանացիներն են, իսկ եռյակը եզրափակում է Բրազիլիայի ընտրանին: Լավագույն տասնյակում ընդգրկվել են նաեւ Պորտուգալիայի, Արգենտինայի, Շվեյցարիայի, Ուրուգվայի Կոլումբիայի, Իտալիայի եւ Անգլիայի հավաքականները:




**ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՐՆՈՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ - ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԿՐԹԱ-ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ**



ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2014/2015 ուսումնական տարվա ընդունելություն հետեւյալ մասնագիտությունների եւ մասնագիտացումների գծով՝ առկա եւ հեռակա կրթաձեւերով.

***Մագիստրոսի որակավորմամբ՝***
«Հաշվառում եւ աուդիտ»
«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր»
***Ուսման տեւողությունը՝ 1 տարի - առկա կրթաձեւով:***
***Բակալավրի որակավորմամբ՝***
«Ֆինանսներ եւ վարկ» ***(բանկային գործ)***
«Ֆինանսներ եւ վարկ» ***(մաքսային գործ)***
«Ֆինանսներ եւ վարկ» ***(ապահովագրական գործ)***
«Հաշվառում եւ աուդիտ»
«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր»
***Ուսման տեւողությունը՝ 4 տարի - առկա եւ հեռակա կրթաձեւով:***
***Կրտսեր մասնագետ որակավորմամբ՝***
«Հաշվապահական հաշվառում»
«Ֆինանսներ եւ վարկ»
***Ուսման տեւողությունը՝ 3 տարի - առկա կրթաձեւով:***
«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր»
***Ուսման տեւողությունը՝ 4 տարի - առկա կրթաձեւով:***

Ընդունելությունը տվյալ մասնագիտություններով կատարվում է հարցազրույցով՝ 9-րդ դասարանի ավարտական վկայականով:

Շրջանավարտները ուսումը կշարունակեն համալսարանի 2-րդ կուրսից, գերազանցիկ ուսանողները՝ 3-րդ կուրսից՝ համապատասխան մասնագիտությամբ:

Ինստիտուտի շրջանավարտներն ստանում են Ուկրաինայի Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի պետական դիպլոմ, որը ճանաչվում է աշխարհի 82 երկրում:

***Մանրամասն տեղեկությունների համար դիմել՝ ՀՀ, ք. Երեւան, Ավան, Աճառյան 31, հեռ.՝ (+374 10) 61-22-02, 61-30-10, 093-85-25-68 (Երեւան), 5-74-21-31-81 (Թբիլիսի)***
***e-mail: erfiltanx@yahoo.com www.eftneu.am***


## ՀԻՇԱՏԱԿ

### ԱՂԱՍԻ ՍԵՅՐԱՆՅԱՆ

Կյանքի ութսունամյակի շեմին հավերժություն գնաց բոլորիս կողմից հարգված Աղասի Ավագի Սեյրանյանը՝ սերունդներին թողնելով բարի անուն եւ անմար հիշատակ:

Ծնվել է 1935 թվականին, Նինոծմինդայի շրջանի Մեծ Արագյալ գյուղում, արհեստավորի ընտանիքում: Սովորել է տեղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցում, իսկ միջնակարգն ավարտել է Գանձայի դպրոցում: Ավարտել է Երեւանի գյուղմեխանիզացիայի տեխնիկումը, ապա՝ Երեւանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը, ստացել՝ անասնաբույժի որակավորում:

Աղասի Սեյրանյանի աշխատանքային գործունեությունը լրիվությամբ առնչվում է հայրենի գյուղի տնտեսության հետ: Եղել է տնտեսության գլխավոր անասնաբույժը, ապա ընդհանուր ժողովի կողմից ընտրվել կոլտնտեսության նախագահ:

Տարիները հաջորդում էին իրար եւ նորանոր հաջողություններ բերում տնտեսությանը, որի անունը հայտնի դարձավ ոչ միայն շրջանում, այլեւ նրա սահմաններից դուրս:

Տնտեսության բնագավառներում ձեռքբերումները նշանավորվում էին նրա ղեկավարի նորանոր պարգեւներով: Աղասի Ավագյանը արժանացել է ԽՍՀՄ ամենաբարձր շքանշանների ու մեդալների:

Անխոնջ մասնագետի ու ղեկավարի, արտադրության հմուտ կազմակերպչի, հոգատար ամուսնու եւ ծնողի, զգայուն ընկերոջ պայծառ հիշատակը միշտ վառ կմնա բոլոր նրան ճանաչողների սրտերում:

***ՄԵԾ ԱՐԱԳՅԱԼԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ***

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Հոսող ջրերի հավերժահարս: 9.Բռնությամբ մահմեդականացրած գերի քրիստոնյաներից կազմված զորք սուլթանական Թուրքիայում: 10.Պատիվ, հարգանք (բրբ.): 11.Մետաղի մշակման, տաշման եւ մետաղյա իրեր սարքելու վարպետ: 12.Այս տեսակի: 15.Խաղի ժամանակահատված: 16.Անբավարար գնահատական: 17.Երկար ու սուր ծայրով խոցող սառը զենք: 19.«... Դու» մուլտֆիլմ: 21.Կենդանական աշխարհի բարձրագույն ներկայացուցիչ, հոմոսապիենս: 24.Գործող հրաբուխ Իտալիայի հարավում: 25.Կուտակել, հավաքել: 27.Քաղցր, մածուցիկ, բարձր կալորիականությամբ սննդամթերք: 28.Ալբանական դրամը: 30.Բանջարեղեն: 34.Գետ Վրաստանում: 35.Ռազմական նավերի միավորում: 38.Անձնական դերանուն: 39.Անստեղծ: 41.Կարմրել, ամաչել: 44.Աշխարհիկ կամ հոգեւոր իշխանություն խորհրդանշող բազկաթոռ: 45.Անորոշ, երերուն, անհաստատ: 46.Բակի, շենքի, քաղաքի մուտքի դուռ: 48.Գունագեղ, կարճ պարանոցով, խոշոր գլխով, կեռ ու հզոր կտուցով թռչուն: 49.Շաղկապ: 50.Կուսակցական տոմս: 51.Ֆրանսիացի կոմպոզիտոր, դաշնակահար Միշել ...:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.«Թեհրան-...» ֆիլմ: 2.Ենթադրում, կանխատեսում, գուշակում: 3.Մետաքսի որդ: 4.Գիպսակերտ: 5.Վիրահայ գրող ... Սեյրանյան: 6.Կինոդերասան Բրյուս ...: 8.Անմարդաբնակ դառնալ, պարպվել: 13.Անֆիլտր ծխախոտ: 14.Բոլիվիայի մայրաքաղաքներից մեկը (մյուսը՝ Լա Պաս): 18.Երրորդ մեսրոպատառը: 20.Կարթագենացի զորավար, hռչակավոր Հաննիբալի հայրը՝ Համիլկար ...: 22.Հայ երգիչ, դերասան, թմբկահար: 23.«... յաման»: 26.XIII դարի վերջի հայ-վրացական պետական գործիչ, զորավար Խութլու ... Արծրունի: 29.Աբեղա, սքեմավոր, վանական: 31.Հեղուկ շարակցական հյուսվածքի տարատեսակ: 32.Կարող, ընդունակ, ձեռնհաս: 33.Բրդից գործած: 35.Որեւէ բնագավառի մեջ նոր թափանցելը: 36.Լեռ Իսպանիայի հարավում: 37.Երկրպագում, դավանում: 40.Անգլիացի գրող ... Քրիստի: 42.Ոդիսեւսի հայրենի կղզին: 43.Շոտլանդացի մաթեմատիկոս, ֆիզիկոս, լոգարիթմի ստեղծողներից՝ Ջոն ...: 46.Խիժ, խեր, կռուք: 47.Հայ գուսան, ԽՍՀՄ գրողների միության անդամ:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Բանգի: 6.Սարո: 9.Սուրեն: 10.Արարատ: 12.Աթոռ: 14.Լամբադա: 18.Մարգո: 20.Նա: 22.Գազա: 24.Վտակ: 26.Սահակ: 29.Կակաո: 31.Ռեգբի: 34.Նժար: 36.Աներեր: 37.Նարինե: 38.Արփի: 39.Ձովունի: 42.Փեսա: 44.Չկա: 46.Արար: 47.Ներվ: 49.Ամուր: 50.Այգի: 52.Ճոն: 53.Ժպիտ: 56.Եվա: 58.Ցավ: 60.Արու: 61.Կշռել: 63.Արտ: 64.Որակով: 65.Եզր: 66.Ամպ: 67.Սիգար: 68.Դուռ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Ազատ: 3.Գդալ: 4.Խումբ: 7.Արթուր: 8.Տարոն: 11.Տայգա: 13.Ռիո: 15.Անարգ: 16.Ամուսին: 19.Գիա: 21.Աթա: 23.Ակռա: 25.Տոննա: 27.Հարյուր: 28.Կարմիր: 29.Կանեփ: 30.Կարաս: 32.Երգիչ: 33.Բալզամ: 35.Ժերար: 40.Վարժ: 41.Նադիր: 43.Անիվ: 45.Կանցլեր: 48.Վճիռ: 50.Աքլոր: 51.Գեղամ: 54.Պատառ: 55.Տուշպա: 57.Ակոս: 59.Վարդ:


Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445